

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ. հունվար-օգոստոսին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 294.6 մլրդ.դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը զիջել է 6.9 %-ով: 2006թ. օգոստոսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2006թ. հուլիսի 115.5%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի, ունի հետևյալ պատկերը. բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 164835.7 մլն. դրամ, որը զիջել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 15.1%-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 129809.9 մլն. դրամ, որը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 6.2 %-ով:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ մարզերի

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2006թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2006թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2006թ. հունվար-օգոստոս	2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
ք.երևան	0.3	100.0	3.0	100.0	17.9	65.1
Արագածոտն	6.9	115.0	60.7	105.7	14.8	78.3
Արարատ	5.7	116.3	39.2	105.4	23.2	78.4
Արմավիր	6.2	96.9	34.0	105.9	21.7	77.2
Գեղարքունիք	10.0	114.9	93.4	105.7	23.5	78.3
Լոռի	6.4	114.3	61.8	105.6	16.6	86.9
Կոտայք	6.7	119.6	54.0	105.9	125.3	89.9
Շիրակ	8.8	114.3	78.6	105.8	21.9	78.5
Սյունիք	4.9	111.4	44.6	105.9	8.4	78.5
Վայոց ձոր	2.2	115.8	20.0	106.4	6.9	79.3
Տավուշ	4.8	114.3	36.4	106.7	11.8	78.7
Ընդամենը ՀՀ	62.9	112.9	525.7	105.8	292.0	82.3

2006թ. հունվար-օգոստոսին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության ծավալները, բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես. սպանդի համար իրացված անասնի և թռչնի ծավալը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 7.2 հազ. տոննայով կամ 12.9 %-ով, կաթինը՝ 28.8 հազ. տոննայով կամ 5.8 %-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: